

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՊԵՄ  
ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ  
ԳԵՐԽՆԴԻՐ ՄԽԽԹԱՐԵԱՆՆԵՐԻ  
ՀԱՅԵԱՑՔՆԵՐՈՒՄ

(Մեթոդաբանական տեսանկիւններ)

Հարցադրումն ինքնին պայմանաւորում է խնդրի քննարկումը պատմութեան իմաստաւորման լայն համատեքստում։ Պատմութեան փիլիսոփայական վերլուծութիւնն ի յայտ է բերում հետեւեալ օրինաչափութիւնը՝ մարդու մէջ հոգեւորի աղթնացումն ու զարգացումը ծնունդ՝ է տալիս քաղաքակրթութեանը։ Այս գործընթացը ենթադրում էր միաւորող՝ հոգեւոր սկզբի առկայութիւնն, այսինքն՝ մարդկային կեցութեան գաղափարականացում։ Ընդ որում, հոգեւոր ինտեգրացիայի ամենաարդիւնաւէտ կառոյցը բնական ամրակի դեր կատարող աւանդական՝ ցեղային գործօնն էր։ Ուստի եւ հասարակական շահը պէտք է դիտուէր որպէս որոշակի ազգի շահ։ Աւանդական հէնքի վրայ ստեղծուող մշակութային որոշակի (գրաւոր) աւանդոյթի մէջ մարդու ներառման գլխաւոր կառոյցը կրթական համակարգն էր, ինչից եւ առաջանում է իւրաքանչիւր ազգի մշակոյթը։ Մինչդեռ մշակոյթը (գաղափարակիսուութիւնը) ապահովում է ազգի անկախ գոյութեան նախապայման հանդիսացող՝ ազգի հոգեւոր ինքնութիւնը։ Վերջինս պայմանաւորուած է մշակութային միասեռութեամբ, ինչը բացառապէս կրթութեան միջոցով է ձեռք բերւում։ Այդ իսկ պատճառով կրթական համակարգն ազգային մշակոյթի կարեւորագոյն հաստատութիւնն է, ազգի եւ ազգային պետականութեան ձեւաւորման եւ պահպանման խթանը։

Այս իրողութիւնը դեռեւս հին ժամանակներում յստակօրէն գիտակցուել է ինչպէս Արեւելքում, այնպէս էլ Արեւմուտքում։

Արեւելեան ժողովուրդների (չինացիների, հնդիկների, ճապոնացիների) հասարակական կեանքի բոլոր դրսեւորումները պայմանաւորուած էին «ՌւազիչԱշակերտ» համակարգով, ինչը ժամանակների եւ սերունդների ժառանգորդութիւնն ու պետական կառուցուածքի անսասանութիւնն ապահովող աւանդոյթի պահպանման եւ զարգացման միջոցն էր: Ազգային դաստիարակութիւնը յոյների եւ հոռմէացիների հասարակական կեանքի անկիւնաքարն էր ու քաղաքական իրաւունակութեան նախապայմանը: Հայոց գրերի ստեղծման արդիւնքում ձեւաւորուած Ազգային դպրոցը կոչուած էր Հայ եկեղեցու հետ մէկտեղ ապահովել ազգի հոգեւոր ինքնութիւնը, դրանով նպաստում նաեւ ազգի ազատ գոյութեան եւ ազգային պետականութեան ստեղծմանը: Միաժամանակ պետութեան կայացման եւ կենսագործունէութեան չափանիշը նոյնպէս ժողովրդի կրթուածութեան աստիճանն է: Ազգային զգացմունքները, ազգային ինքնագիտակցութիւնը եւ ինքնաճանաչումը պետականութեան ճգտումների հիմքն են, որն իր հերթին կախուած է ազգային կրթութեան եւ դաստիարակութեան խնդիրների լուծման մակարդակից:

Կրթութեան խնդիրն արդիական է նաեւ արդի աշխարհում ինչպէս մեծ, այնպէս էլ փոքր ազգերի համար: Ուստի եւ կրթութեան նշանակութիւնը հասարակական կեցութեան համար արտաժամանակային է եւ համընդգրկուն: Այս բանաձեւի համեմատ է բնութագրելի արդէն 3 դար տեւող Միխթարեան միաբանութեան բեղմնաւոր գործունէութիւնը ազգային մշակոյթի պահպանման, ուսումնական առողջութեան առումով: Ուխտի առաջնորդ Միխթարի եւ նրա հետեւորդների համոզմամբ, ազգային պետականութիւնից գուրկ եւ աշխարհով մէկ սփոռուած հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցութիւնը հնարաւոր է ամրապնդել միայն այդ ճանապարհով: «ԺԸ դարուն ընդհանուր իրավիճակը - ազգային, քաղաքական, ընկերային, հանրային, կրօնական եւ մշակութային կեանքը - անարիւն էր: Ճնշուած ժողովուրդը պէտք ունէր ինքնագիտակցութեան եւ ազգային զարթոնքի. պէտք ունէր կրօնական եւ մշակութային կեանքի մը վերանորոգումին. պէտք ունէր բարոյական եւ իմացական կառոյցներու: Ասոնք տեսլականներ էին, որոնց լոյսը ժժուար կը ճառագայթէր, հոն առաջնորդող ճամբանները պէտք ունէին արմատական նորոգութիւններու: Ժողովուրդը, զանազան պատճառներով,

կորսնցուցած եւ զրկուած էր անոնցմէ, բայց ներքսապէս կ'այրէր անոնց կարօտովկվէ<sup>1</sup>: Ընդ սմին, այդ ճանապարհն անցնելու գլխաւոր միջոցը նրանք համարում էին ազգային լուսաւորութիւնը՝ կրթութիւնն ու դաստիարակութիւնը:

Միաբանութեան նշանաբանը լաւագոյնս ձեւակերպել է Գ. Այվազովսկին. «...ազգին աչքը եւ միտքը բանալ գիտութեամբ՝ որպէս զի հասկընայ, թէ իր պատմութիւնը ինչ է, իր լեզուն որն է, իր դաւանութիւնը ուղղիղ է, եկեղեցին ուղղափառ է, մէկ խօսքով՝ ոչ ազգ մը սեպուելու համար իր ազգութիւնն ուրանալու կարօտ է, եւ ոչ ուղղափառ ըլլալու համար իր եկեղեցիէն ու առաջնորդներէն հեռանալու ապստամբելու է»<sup>2</sup>:

Միիթարեանների աշխատութիւններում (Գ. Այվազովսկի, Գ. Զարբհանալեան) շարադրուած է միաբանութեան՝ Միիթարի կողմից ձեւակերպուած գործունէութեան ծրագրային դիրքորոշումը: Միիթարի մտադրութեամբ, ազգի բարեպաշտ հոգին պէտք է դառնար գործիք ազգին կրթելու եւ դասախճակելու նպատակով: Միեւնոյն ժամանակ անհրաժեշտ է համարուել մօտեցնել հային եւրոպային՝ առանց ազգայինից նրան օտարացնելու: Այսինքն, եւրոպական գիտութեան եւ լուսաւորութեան համակարգից հարկ է համարուել փոխ առնել այնպիսի գաղափարներ, որոնք համեմատ էին ազգի էութեանը, նրա հոգեւոր հակումներին:

Միիթարեանների ծրագրային դիրքորոշման ներկայացումը կարեւորում է նրանով, որ ժթ դ. ողջ ընթացքում հայ «պահպանողականների» (որոնց շարքում էին դասւում նաեւ Միիթարեանները) եւ «լուսաւորականների» միջեւ գաղափարական պարքար է ծաւալուել ազգային լուսաւորութեան իրականացման մեթոդների եւ միջոցների վերաբերեալ: Խնդիրը յանգում էր ազգի գոյութեան եւ յետագայ զարդացման երաշխիքների որոնմանը, ինչը վերաբերում է ազգային մշակոյթի զարդացման գործօնի («բուն ազգային» թէ «ոչ ազգային») ընտրութեանը եւ հիմնաւորմանը: Հակառակ խորհրդային շրջանում ձեւաւորուած այն

<sup>1</sup> ԵՍՐԸԼՄԵԱՆ Հ. ՏԱՃԱՏ ՎՐԴ., Միիթարեան գաղափարական եւ Միիթարեան իմբնութիւն, Բազմավէպ, 1994, էջ 72-73:

<sup>2</sup> ԱՅՎԱԶԵԱՆ Հ. ԳԱՐԻՒԵԼ ՎՐԴ., Ռւրուագիծ ոգույ եւ ընթացից Միիթարեան միաբանութեան վեմենկոյ, Կ. Պոլս, 1875, էջ 17-18:

տեսակէտին, ըստ որի հայ պահպանողականները դէմ էին եւրոպական նորաստեղծ գաղափարներին, Մխիթարեաններն ընդդիմանում էին այն գաղափարներին միայն, որոնք խոչընդուռում էին ազգային ինքնագիտակցութեան զարգացմանը։ Նշուած ուղղութիւնների միջնեւ գաղափարախօսական տարբերութիւնը, ըստ էութեան, այս կամ այն գործօնի շեշտադրման մէջ է<sup>3</sup>։ Ուստի եւ անհիմն է թուում խորհրդահայ գրականութեան մէջ բազմիցս շօշափուած եւ մինչեւ օրս չյաղթահարուած այդ բանավէճի գնահատումը՝ որպէս իրարամերժ կարծիքների անհաշտ պայքար։ Քննարկուող բանավէճը որակելի է որպէս մէկ նպատակային դիրքորոշման տարբեր (սակայն ոչ իրարամերժ, այլ, ընդհակառակը, միմեանց լրացնող) մօտեցումների դրսեւորում։

Ազգային լուսաւորութեան խնդրի Մխիթարեանների ըմբռնումը հարկ է բխեցնել նրանց պատմափիլխոփայական հայեցակարգից, որը անդրադարձ է ազգային մշակոյթի նկատմամբ եւ բնութագրելի է որպէս ազգային դաւանանք։

Մխիթարեանների պատկերացմամբ, պատմութիւնը «ոչ այլ ինչ է, բայց ընծայութիւն փոփոխման այնորիկ, ուստի ամենայն իրիք՝ բացի Աստուծոյ, որ առանց փոփոխութեան է, գոյ ինչ պատմութիւն» (Հ. Գաթըրճեան)։ Պատմութեան գլխաւոր առարկան է մարդը՝ «առաւել ըստ մտաւոր զօրութեանց իւրոյ», իբրեւ առանձին մարդ եւ իբրեւ անդամ «ընկերական հաղորդութեան», ինչն ի բնէ ներյատուկ է նրան։ Մարդու նման բնութագրումն է պայմանաւորել այն պնդումը, որ պատմութիւնը ողջ մարդկութեան վրայ ազդեցութիւն գործող նշանաւոր դէպքերի հանդէսն է կամ էլ մարդու գործունէութեան նկատելի արդիւնքները, որոնք օրդանապէս շաղկապւում են մէկ միասնութեան մէջ եւ վկայում մարդու նիւթական եւ մտաւոր (կամ հասարակական կեցութեան) առաջադիմութեան մասին։ Պատմութիւնը, այսպիսով, դիտում է որպէս հասարակական առաջընթաց շարժում, որը, ըստ էութեան, մարդու ազատութեան դրսեւորման միջոց է։ Միեւնոյն ժամանակ որպէս կրօնական մտածողներ, Մխիթար-

<sup>3</sup> Դրա մասին աւելի մանրամասնօրէն տե՛ս ՄԻՐՈՒՄԵՍՆ ՌԻՄԱՆ, ԺԹ դ. հայ կրօնական փիլխոփայութեան ուսումնասիրութեան մեթոդաբանական հարցերի մասին.- Հայ իմաստասիրութիւնը հոգեւոր մշակոյթի համակարգում, Պրակ 3, Ե., 1998, էջ 114-115։

եաններն ընդունում են պատմութեան վրայ Աստծոյ տնօրինութեան մասին գաղափարը, ուստի եւ պատմութիւնը դիտում են որպէս Աստծոյ զօրութեան եւ կամքի արտայայտութիւն։ Ելնելով դրանից, նրանք պնդում են, որ միայն քրիստոնէական ոգին է ընդունակ ճանաչել պատմութիւնը։ Մինչդեռ պատմութեան իմացութիւնը բաւարարում է մարդու բնական հակումը՝ ազգերի պատմական ճակատագրերի օրինակի վրայ օգտակար փորձի ձեռք բերումը։

Միիթարեանների կարծիքով, պատմութեանը բնորոշ է ազգային նկարագիր, ուստի եւ պատմութիւնը ազգերի պատմութիւնն է։ Բանն այն է, որ մարդուն ի բնէ ներյատուկ կեցութեան միակ ձեւի քաղաքակրթութեան առաջացման եւ զարգացման նախապայմանը նրանք համարում են լեզուն։ Մինչդեռ գիտութիւնների եւ կրթութեան, այսինքն՝ մտաւոր առաջադիմութեան սկիզբն ու հիմքը համարում են ազգային լեզուն։ Լեզուների յայտնի բաժանումից յետոյ («իւրաքանչիւր ըստ լեզուս իւրեանց եւ ի տոհմս իւրեանց») իւրաքանչիւր լեզու, «ամէն մէկ ցեղին բաղդին կամ հանգամանացն, ապրելու կերպին, տեղույն եւ ուրիշ ազգեցցութիւն ընող հոգեկան ու ֆիզիքական որպիսութեանց դրոշմն իր վրայ կը յայտնէր»<sup>4</sup>։ Դրանով է բացատրում այն հանգամանքը, որ ազգային լեզուն դառնում է ազգերի իւրօրինակ սեփականութիւնը, ուստի եւ հին եւ անուանի ազգերի առաքելութիւնն էր՝ «բուն ազգային լեզուաց վրայ ունեցած սէրն ու յարգը, ու անոր պահպանութեան, գործածութեան ու պայծառութեան համար ցուցըցած հաստատուն խնամքը»<sup>5</sup>։ Միւս կողմից, ԺԳ-ԺԴ դարերում Եւրոպայում կատարուող գործընթացը, երբ գիտութեան, արուեստի (յատկապէս գրականութեան) եւ կրթութեան համակարգում գերիշնող լատիններէնն իր տեղը զիջում էր ազգային լեզուներին, բնութագրուում է որի արուեստը և արարական նոր ազգերի ձեւաւորման սկիզբ։ Այսպէս, ապէս Եւրոպական նոր ազգերի ձեւաւորման սկիզբ։ Այսպէս, արուեստը (բանաստեղծութիւնը՝ «ազատական արուեստը») եւ «ազգայնութիւնը» փոխպայմանաւորող եւ միմեանց զարգացնող

<sup>4</sup> ՅՈՎՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ ՎՐԴ., Մարդկային լեզուին սկզբան, հանգամանց, միութեան ու բաժանման եւ ազգային լեզուաց վրայ Քննական տեսութիւն մը, Վիեննա, 1857, էջ 61։

<sup>5</sup> Նոյն տեղում, էջ 93։

սկզբեր են անուանւում: «Արհեստըն ուրիշ բան չէ՝ բայց եթէ գաղափարէն. ու մտքին ընդհանուր պետութենէ ծնած արդիւնք մը, որն որ առանց ազգային ոգւոյ, օրէնքի, կերպի ու դրոշմի չիկրնար ապրիլ ու տեւել. արհեստը՝ յատկապէս խօսելով՝ առաջ անհատէ կամ առանձին անձէ մը իր գոյութիւնը կը սկսի ու ետքն ազգին մէջ կը յօրինուի ու իր բուն կերպարանքը կ'ընդունի, ուստի եւ իրաւամբք կրնայ ըսուիլ՝ որ արհեստն առանձին անձի մը ու բոլոր ազգային ոգւոյն լեզուն է»<sup>6</sup>:

Արհեստին ներյաստով նշուած առանձնայատկութեան չնորհիւ այն համարւում է ազգային մշակոյթի հիմնական ձեւերից մէկը, որի նպատակն է «ընդհանուր մարդկութեան ի մասնաւորի (այսինքն ազգի մը մէջ) յառաջադիմութիւնը» (Պ. Յովնանեան): «Ամէն մէկ քաղաքականացեալ (քաղաքակրթուած - Ռ. Մ.) ազգ կրթութեան (մշակոյթի - Ռ. Մ.) մէջ յառաջադէմ կ'ըլլայ ու կը կատարելագործի իր երկրին օդաբաժնին ու բնական հանգամանացն եւ իր ցեղին սեպհական նկարագրին համեմատ, որով եւ իր լեզուն, գրականութիւնն ու արհեստներն հարկաւորապէս յատուկ, ազգային տիպ կամ դրոշմ մը կ'ընդունին: Ասոր համար այն ազգն՝ որուն մէջ ըլլող արհեստն ու գիտութիւնը սեպհական կերպէն (ազգայնութենէ) զուրկ են՝ ներքին կեանք չունի»<sup>7</sup>: Դրանից հետեւում է, որ մի ժողովրդի մէջ ներքին կեանքի արտայայտութիւն հանդիսացող ազգային մշակոյթի (գիտութեան, արուեստի, գրականութեան, կրթական համակարգի) բացակայութիւնն այդ ժողովրդին զրկում է հասարակական կեցութեան (ազգային ձեւի մէջ) ստեղծման ու պահպանման հնարաւորութիւնից եւ իրաւունքից: Միւս կողմից, ազգային մշակոյթի առկայութիւնն ազգի ինքնութեան (Միխարեանների եղաբանութեամբ նաեւ՝ «ազգայնութեան») պահպանման նախապայմանն է, իսկ հեռանկարում նաեւ ազգի քաղաքական ձգտումների հիմքը:

6 Նոյն տեղում, էջ 105: Այս տեսակէտին յարում են մի շարք Միհիթարեաններ: Տե՛ս՝ ԳԱԹԸՐՃԵԱՆ Հ. ՅՈՎՍԵՓ ՎՐԴ., Պատմութիւն մատնեազրութեան հայոց, Վիեննա, 1851, էջ 2, ՏԱՇԵԱՆ Հ. ՅԱԿՈԲՈՍ ՎՐԴ., Հետազոտական պատմութիւն մատնեազրութեան հայոց, Վիեննա, 1970, էջ 8: ԱԼԻՇԵԱՆ Հ. ՂԵՒՈՆԴ, Երկնք, 1981, էջ 99:

7 ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ Հ. ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ., Պատմութիւն հայերէն դպրութեամց ի պէտս ուսման ազգային վարժարանաց, Վենետիկ, 1878, Մաս 2-րդ, էջ 396:

իսկ քանի որ լեզուն է ազգի հոգեւոր միասնութեան, այսինքն՝ ազգային մշակոյթի ստեղծման եւ զարգացման գլխաւոր միջոցը, ապա հարկ է կատարելագործել եւ օտար ազդեցութիւններից մաքրել ազգային լեզուն՝ այն համազգային լեզուի վերածելու նպատակով։ Միիթարեանների խորին համոզմամբ, մտաւոր առաջադիմութեան հետեւանքով նոր ժամանակաշրջանում առաջացած գաղափարախօսական մթնոլորտը կարող է նպաստել փոքր ազգերի համար կենսական նշանակութիւն ունեցող այդ գործընթացին։

Խորհրդային շրջանի հետազոտութիւններում Միիթարեանների (եւ ոչ միայն նրանց) այդ դիրքորոշումը որակուել է որպէս գաղափարապաշտ եւ միակողմանի։ Պատմութիւնը, սակայն, բացայացուամ է այն օրինաչափութիւնը, որ մշակութային եւ քաղաքական գործոնները միասնաբար են գործուամ։ Քաղաքական շարժումների շարժառիթը, որպէս կանոն, մշակութային է։ Միաժամանակ մշակութային (գաղափարախօսական) շարժումների ենթատեքստը քաղաքական է։ Այսպէս, Հայոց գրերի ստեղծման, Հայաստանում քրիստոնէութեան ընդունման եւ լուսաւորականութեան տարածման խորքային իմաստը քաղաքական է։ Մշակոյթի ինքնատիպութիւնը քաղաքական անկախութեան ձգտման հիմքն է, մինչդեռ քաղաքական անկախութիւնը՝ ազգի ինքնութեան (ինչը մշակութային չափանիշ է) ապահովման գրաւականն է։ Այսօր իսկ՝ ի դ. վերջում, մշակոյթների փոխներգործութեան (որը ժամանակի հրամայականն է) քաղաքական հակասութիւնների բախման ամենալարուած կէտերից մէկն է։ Մեծ պետութիւններ ներկայացնող հետազոտողների կարծիքով, միայն քաղաքական անկախութեանը հասնելուց յետոյ է որեւէ ժողովուրդ ձգտում հասնել նաեւ մշակութային անկախութեան։ Միիթարեանները ժամանակին հակառակն են պնդում եւ նրանց պնդումն ունի ինչպէս պատմական, այնպէս էլ բարոյական լուրջ հիմնաւորում։

Ազգային մշակոյթը Միիթարեանները դիտում են որպէս ազգային էութեան հաստատման, ինքնաճանաչման եւ ինքնահաստատման նկատմամբ հայ ժողովրդի ձգտման հիմքը, որի իրականացման խթանը համարում են ազգային լուսաւորութիւնը։ Բանն այն է, որ կրթութիւնն ու դաստիարակութիւնը Միիթարեանների ընկալմամբ, ազգի մշակութային արժէքների փոխհա-

դորդման գլխաւոր միջոցն է: Դրանով է բացատրելի հայ դպրոցի նպատակի եւ հայեցի դաստիարակութեան Մխիթարեանների արժեւորումը:

Նոր ժամանակի Եւրոպայում տեղի ունեցող փոխակերպութիւնը՝ հասարակական-քաղաքական առաջընթացը եւ գիտութիւնների զարգացումը պայմանաւորելով գլխաւորապէս կրթութեամբ, նրանք գտնում են, որ վերջինիս միջոցով հայ ժողովրդի համար նոյնպէս կը բացուի պատմական նոր ասպարէզ: Դպրոցը, սակայն, իր բուն նպատակին կը հասնի այն դէպքում, երբ այնտեղ տիրի ազգային ոգին՝ ազգի հոգեւոր վերածննդի նախապայմանը: Երբ ազգի «ամբողջութիւնն համասեռ տարրերք էութեան չունի... կատարեալ ընկերութիւն մը չձեւացըներ...» (Գ. Ճելալեան): Այդ իսկ պատճառով ազգային լուսաւորութիւնը նրանց կողմից դիտում է որպէս ազգային ոգու «վերկենդանացման» միջոց, որի հիմնական տարրերն են՝ ազգային լեզուն, հայոց պատմութիւնը եւ կրօնը:

Ինչպէս արդէն նշուել է, լեզուն Մխիթարեանները համարում են ազգի հոգեւոր միասնութեան, այսինքն՝ ազգային մշակոյթի ձեւաւորման եւ զարգացման խթանը: Ուստի լեզուն, ըստ նրանց, ներկայ եւ ապագայ սերունդներին ազգի հոգեւոր ակունքների հետ կապող գլխաւոր օղակն է: Հէնց այս տեսանկիւնից է անհրաժեշտ քննարկել Մխիթարեանների գործունէութեան ողջ ընթացքում ազգի հոգեւոր կեանքի համար արդիական «գրաբար-աշխարհաբար» խնդիրը, որն առ այսօր կարօտ է համարժէք գնահատմանը: Լեզուն, որպէս պատմամշակութային երեւոյթ, ենթակայ է զարգացման: Այդ դրոյթի հաստատումն անհրաժեշտ էր Մխիթարեաններին՝ գրաբարի պահպանման եւ աշխարհաբարի ձեւաւորման ու զարգացման օրինաչափութեան հիմնաւորման համար: Մխիթարեանները, ըստ էութեան, գրաբարն ու աշխարհաբարը դիտում են որպէս ազգային լեզուի պատմականօրէն պայմանաւորուած եւ ազգի առաջադիմութեան համար խիստ անհրաժեշտ երկու ձեւեր: «...դիտութեանց եւ բարձրագոյն ուսմանց մէջ այն հին ու պատուական գրաբար լեզուին ամէն կերպ առաջնութիւնն ու բարձրագոյն գահը տալին ետքը, ժամանակին պարագայիցը հետեւելով՝ աշխարհաբար լեզուն ալ՝ գրաբարին հովանեցը տակ մշակելու, վայելչացընելու

Եւ կատարելագործելու աշխատիլը մեր մասնաւոր պարտքը պիտ'որ սեպենք»<sup>8</sup>:

Մեզանում ձեւաւորուել եւ դեռեւս վերջնականապէս չի յաղթահարուել այն մտակաղապարը, ըստ որի գրաբարի պահպանումն ու կիրառումը խոչընդոտում է ազգի առաջադիմութեանը: Եթէ հաշուի առնենք այն հանգամանքը, որ հասարակութիւնը (յատկապէս ազգային հասարակութիւնը) անցեալի մէջ սերտաճած համակարգ է, որի լիարիւն գոյութիւնն իսկ անհնարին է առանց անցեալում ծնունդ առած մշակութային ձեւերի, եւ որոնք հնարաւոր են դառնում գլխաւորապէս լեզուի միջոցով, ապա հնարաւոր կը դառնայ գնահատել գրաբարի նկատմամբ Միխիթարեանների գրաեւորած վերաբերմունքի ողջ լրջութիւնը, կարեւորութիւնն ու ստուգութիւնը: Դեռ աւելին, անգամ աշխարհաբարի ձեւաւորումը, կատարելագործումն ու զարգացումը հնարաւոր է միայն գրաբարի հէնքի վրայ: Այդ իրողութիւնը նոյնպէս յատակօրէն գիտակցել են Միխիթարեանները: «Հայութիւնն ու հայ լեզուն՝ իւր զարգացման այն դարուն մէջ միայն պիտի կարենայ ինքզինքն անկարու համարել դասական լեզուին, երբ կարող լինի գերազանցել Ե դարը. այլ այս բանս թէեւ կարելի՝ բայց դեռ շատ հեռի է»<sup>9</sup>: Թւում է, թէ 110 տարի առաջ Հայր Բարսեղ Սարգսեանի ձեւակերպած այս միտքն այսօր իսկ արդիական է հայ հոգեւոր կեանքի համար:

Ինչպէս լեզուն, այնպէս էլ պատմութիւնը համարւում է ազգի հոգեւոր միասնութեան կարեւորագոյն գործօնը, քանզի նրա միջոցով է ապահովւում սերունդների ժառանգութիւնը: Միխիթարեանների կարծիքով, ազգի մէջ պատմական յիշողութեան առկայութիւնը նպաստում է «ազգայնութեան» կենսունակութեանը, այսինքն՝ ազգային ոգու կենդանութեանը: «Հայաստանի օրհնեալ ծոցն է մեր խանձարուղքը, նոյն բոլորիս ցանկալի հայրենիքը... այն կլիմայի տակ, այն լերանց քաղցր հովանեաց եւ այն հովտաց ու դաշտաց գովութիւններուն ապաւինելու որ ըլլանք, երկրին կազմութեանն, աշխարհին դրից, օդուն ներգոր-

8 ԹՈՎՆԱՆԵԱՆ Հ. ՊՈՂՈՍ ՎՐԴ., ՆՉՈՒԱԾ ԱՇԽ., Էջ 120:

9 ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. ԲԱՐՄԵԼ ՎՐԴ., Աշխարհաբարը գրաբարի ձեռքով զարգացնելու և կամունարելու և գրաբար լեզու աշխարհաբարի մէջ կենդանացնելու «խնդիրն», Բազմակից, 1890, Մարտ, Էջ 89:

ծութեան, հարց սրբազան ոսկերաց գերեզմանէն խօսած ձայնին եւ քաղաքական յարաբերութեանց ազդեցութեանն համեմատ՝ կը ծնանի ազգային ոգի մը, Հայաստանի ոգին»<sup>10</sup>:

Դրա հետ մէկտեղ նրանք գտնում են, որ ազգային պատմութեան իմացութիւնը ազգի առաջադիմութեան կարեւոր պայմաններից մէկն է, քանզի անցեալն է հնարաւորութիւն ընձեռում ազգին ըմբռնելու իր ներկայ վիճակը եւ կանխորոշելու ապագան: «Յառաջադիմութեան ճշմարիտ բաղձանք ունեցող ազգի մառաջին ու գլխաւոր պարտքն է իր անցեալ վիճակին վրայ աղէկ եւ կատարեալ տեղեկութիւն ունենալ, որպէսզի սեպհական բնաւորութիւնը, կարողութիւններն ու նաեւ պակասութիւնները ճանչնալով կարող ըլլայ իր ներկայ վիճակն աղէկ կարգաւորել եւ իրեն երջանիկ ապագայ մը պատրաստել»<sup>11</sup>:

Ազգային լուսաւորութեան երրորդ կարեւոր գործօնը Միխթարեանները համարում են կրօնը: Հարկ է նշել, որ Միխթարեանների ողջ գործունէութիւնը ծաւալում է երկու խորհուրդների շուրջ՝ Ազգ եւ Կրօն: Ընդ սմին կրօնը Միխթարեանների համար ազգային խնդիրների լուծման հզօր խթան է: Նման պնդումը ենթադրում է կաթոլիկամէտութեան եւ հայ ժողովրդի դաւանափոխութեան ձգտման մէջ Միխթարեաններին բազմիցս ներկայացուած մեղադրանքների վերահմաստաւորումը: Խնդրի էութիւնը՝ դեռեւս ԺԹ դ. կէսերին յստակօրէն ըմբռնել է Ստ. Նազարեանը. «Միխթարը եւ նրա աշակերտները, գտնուելով պապի բացառիկ ազդեցութեան ներքոյ, պարտաւորուած լինելով կաթոլիկ իտալիայի բարեացակամութեան համար, բնականաբար, չէին կարող ունենալ այլ շահ, բացի լատինական եկեղեցու շահից, սակայն Հայաստանում կաթոլիկութեան հաստատումը խորթ էր՝ հայերի բարոյական, մտաւոր ազնուացմանն ուղղուած նրանց նախնական մտադրութեանը»<sup>12</sup>: Մեր օրերին այդ տեսակետը զարգացնում է Հ. Տաճատ Վլրդ. Եարտըմեանը: Նրա կարծիքով, հայ ժողովրդի դաւանափոխութիւնը երբեք չի եղել Միխ-

<sup>10</sup> ՃԵԼԱԼԵԱՆ Գ., Ազգային արդի վիթակը պատմութեամ առջեւ, Բազմագէպ, 1863, գետրվար, էջ 33-34:

<sup>11</sup> ԶԱԴՐՃԵԱՆ ԵՓՐԵՄ, Պատմութիւն հայոց, Վիեննա, 1851, Յառաջաբան:

<sup>12</sup> Ст. Назарян. Овозрение истории гайкансской письменности в новейшие времена. Казань, 1846, с. 73.

թարի եւ Մխիթարեանների նպատակը: Միջեկեղեցական յարաբերութիւնների ջերմ ջատագով Մխիթարը միտում չի ունեցել ստեղծելու կաթոլիկական հայրապետութիւն, քանզի համարում էր դա վտանգաւոր. «Հայ ժողովուրդին եւ անոր կրօնական գրտակցութեան, ինչպէս նաեւ խզումը եկեղեցական ու կրօնական «աւետարանական» հաղորդակցութեան մը»<sup>13</sup>:

Նշուած տեսակէտի ստուգութեան մասին են վկայում թէկուզ հէնց մեր պատմութեան վերջին երեք հարիւր տարիները: Բայց անգամ զուտ տեսական՝ գաղափարախօսական առումով Մխիթարին եւ նրա հետեւորդներին ուղղուած մեղադրականներն անհիմն են թւում, քանզի դրանք ընդունելու դէպքում անըմբռնելի են դառնում հայ մշակոյթի պահպանման, ուսումնասիրման եւ փոխաղորդման նպատակով թափած նրանց ողջ ջանքերը: Այս առումով նպատակայարմար է յիշատակել այն հանգամանքը, որ «Բազմավիճ» հանդէսի իւրաքանչիւր հատորում (սկսած 1843 թ. առ այսօր) հարատարակուում են նիւթեր, կապուած անդային խնդիրների հետ՝ «Յառաջադիմութիւն ազգային» (1844), «Ազգային» (1846), «Ազգային յատուկ գաստիարակութիւն» (1875), «Անցեալ պատմութեան կրթիչ ազդեցութիւնն եւ նորա ուսումնասիրութեան անհրաժեշտ միջոցներն» (1890), «Օսմանեան թուրքիոյ հարատարարութիւնները հայ հպատակներուն վրայ կամ ինչու հայերը չեն բազմացած» (1999):

Հարկ է նշել նաեւ, որ «Բազմավիճ» հանդէսի հատորներում եւ Մխիթարեանների առանձին աշխատութիւններում քրիստոնէական գաղափարախօսութեան տեսանկիւնից քննարկուում է հայ ժողովրդի գիտակցութեան մէջ հայրենասիրութեան եւ աղքատութեան ամրապնդման խնդիրը: Ազգային լուսաւորութեան միջոցներն ու նպատակը Մխիթարեանները պայմանաւորում են մարդու կեանքի իմաստի պատշաճ ըմբռնմամբ եւ գտնում, որ առանց «Ճշմարիտ կրօնի»՝ քրիստոնէական ուսմունքի, անհնարին է ճիշտ կրթութեան եւ դաստիարակութեան իրականացումը<sup>14</sup>:

13 ԵԱՐԸԸՆ Հ. ՏԱՀԱՏ ՎՐԴ.՝ Միթրարեան գաղափարական եւ Միթրարեան իմբնութիւն, էջ 87:

14 Տե՛ս ԱԼԻՇԱՆ Հ. ՂԵՒՌԻ, Հայապատում, Վենետիկ, հուն. Ա., Յառաջադան Տե՛ս նաեւ նոյնի, Սէր հայրեմնաց, Բազմավիճ, 1850, թիւ 4, էջ 50-բան: Տե՛ս նաեւ նոյնի, Սէր հայրեմնաց, Բազմավիճ, 1850, թիւ 4, էջ 50-բան:

Հնդդիմախօսելով հին յունական փիլիսոփայութեան մէջ ձեւաւրուած դաստիարակութեան հայեցակարգին, ինչպէս նաև նոր ժամանակի փիլիսոփայութեան մէջ իր արտայայտումը գտած հին էպիկուրականութեան միտումներին, Միխիթարեաները դաստիարակութեան նպատակն են համարում «Թարդը բոլորովին ճշմարիտ մարդ ընել, կամ թէ զանիկա անանկ ու այնչափ կըթեր, որ իր (մարդկութեան) գաղափարին բոլորովին համաձայն ըլլայ»<sup>15</sup>: Դա նշանակում է, որ մարդու մտաւոր եւ բարոյական զարգացման մակարդակը պէտք է համապատասխանի հասարակութեան անդամի եւ պետութեան քաղաքացու նրա կարգավիճակին: Մարդը, սակայն, անդամ է ազգային հասարակութեան եւ ազգասէր ու հայրենասէր լինելը մարդու համար բարձրագոյն առաքելութիւն է: Քրիստոնէութեան կողմից քարոզուող եղբայրասիրութիւնն ու մարդասիրութիւնը չեն խոչընդոտում եւ չեն փոխարինում հայրենասիրութեանը եւ ազգասիրութեանը:

Վերոշարադրեալից հնարաւոր է հետեւեցնել, որ նոր ժամանակաշրջանում (սկսած Ժ. դ.) Միխիթարեան միաբանութիւնը շարունակում է Դ-Ե դդ. ստեղծուած ազգային մշակութային աւանդոյթը, ապահովելով ազգային մշակոյթի զարգացման օրինաշափ ընթացքը: Միւս կողմից, նրանք նպատակ էին հետապնդում հայ ժողովրդին հաղորդակից դարձնել եւրոպական քաղաքականութեանը ազգային մշակութային հէնքի վրայ, այդ գործընթացի մէջ տեսնելով ազգի գոյութեան եւ յետագայ զարգացման խթանը: Որոշակի առումով արդարացի է թւում այն պնդումը, որ հայ լուսաւորական շարժման՝ նոր ժամանակաշրջանի ազգային գաղափարախօսութեան ձեւաւորման եւ զարգացման նախադրեալները սկիզբ են առնում Միխիթարեան միաբանութեան Մըլանակներում:

51. ՅՈՎՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ ՎՐԴ., Բարոյական խորհրդածութիւնն տղոց համար, Վիեննա, 1851, Յառաջաբան:

<sup>15</sup> ՅՈՎՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ ՎՐԴ., Ուսումն ազգային դաստիարակութեան, Վիեննա, 1862, էջ 9: